գիր բարեկրօն քահանայի ձեռօք՝ բոլորագիր Մաշտոց մի գրեալ 1338 թըւոյն :

Եդեսացի մահտեսի Գրիգոր Նուրեկեան՝ նուիրեց մագաղաթեայ ու բոլորագիր Մաշտոց մի 1661 ին գրուած ի Հալէպ :

Տէր. Յովհաննէս ծայրագոյն վարդապետն տէր Պօղոսեան տիգրանակերացի, տեառ Երզնու բարձրահայեաց սուրբ Աստուածածնի վանաց՝ նուիրեց երկաթագիր ու մագաղաթեայ Աւետարան մի փոքր 1287 թուականնէն շատ յառաջ գրուած :

Տէր. Պաղտասար ծայրագոյն վարդապետն տիգրանակերացի նախորդ Առաջնորդն Չնքուշի՝ նուիրեց յիշատակ՝ Ներսէսի Լամբրոնացւոյ մեկնութիւնը Սաղմոսաց, Ժողովողի և Իմաստութեան գրոց, բոլորագիր և բամբակաթուղթ, 1329 ին գրուած ի Սայոց ձոր, ի տէրութեան իշխանաց իշխանին պարոն Պուրթէլի, և ի վարժապետութեան Եսայեայ հռետորի Նչեցւոյ :

Տիգրանակերտու սուրբ Սարգսի եկեղեցւոյ կողմէն Տաղարան մի բոլորագիծ ու բամբակաթուղթ, գրեալ 1476 թուոյն :

Ոսկեփորիկ մի բոլորագիր ու նօտրագիր խառն, Կեսարիա գրուած 1674 ին :

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մօտերս Պօլսոյ անձնական տպարանի մի մէջ տպուած գիրք մի տեսանք, «Պատկեր Հայաստանեայց Լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ» կոչուած, որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ խառնուրդ մի Հայոց ուղղափառ եկեղեցւոյ ծէսական գրոց՝ Ժամագրքին, Շարականին եւայլն, յապաւելով նոյն մէջէն շատ մի պարբերութիւններ և ուրիշ օտարախորթ հատուածներ աւելցնելով հակառակ հոգւոյ սուրբ եկեղեցւոյս. ուստի իրաւամբք կրնանք կոչել զայն բողոքականութիւն վարագուրեալ ընդ անուամբ Լուսաւորչի :

Յիշեալ գրքին Հայոց եկեղեցւոյ ծէսերուն եւ պատարագութեանց ներհակ և անընդունելի ըլլալը վաւերացին բոլոր ազգային լրագիրներն և հանդէսները հրատարակելով՝ մէջ բերելով Պօլսոյ Պատրիարքարանի կողմէն խրկուած պաշտօնական ծանուցումը, զոր հոս կը դնենք մեք ալ :

«Պատրիարքական ծանուցում : 1866 թուական կրող պատկեր Հայաստանեայց Լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ անուամբ գիրք մի հրատարակուած տեսնուեցաւ այս օրերս Տիւլիթճեան Յակոբի տպարանէն ելած : Ցաւ է մեզ տեսնել, որ անոր անանուն հեղինակը մեր եկեղեցական գրեանքը. Մաշտոցը, խորհրդատետրը, Ժամագիրքը, Շարականը և Տաղարանը բառ քանց աղաւաղելով, այսինքն պակսեցնելով աւելցնելով, փոփոխելով և կրճատելով իր վրայ կրած անունին բոլորովին հակառակ Ս. Լուսաւորիչ Հօր վարդապետութիւններէն եւ աւանդութիւններէն ըստ ամենայնի օտար և հեռու, աւելի մոլութեանց պատկեր մը կը ներկայացնէ :

Այս գիրքը ըստ ինքեան դատապարտեալ ըլլալով՝ ի պաշտօնէ պարտաւորեալ կը զգուշացնենք Ս. Լուսաւորիչ Հօր հարազատ զաւակները, որ անոր կեղծ և պատրուակեալ անունէն չխաբուելով՝ մերժեն և արհամարհեն զայն իբրև մոլութեանց խմորում մը» :

5 Ապրիլ 1867

Ի Պատրիարքարանս Հայոց (կնիք)

Կ. Պօլիս :

## ՕՐԱՑՈՅՑ

## 1868

ՆԱԽԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ



digitised by A.R.A.R.@